ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՐԱՄԱՆ

«21» հունիսի 2024թ No 3416-Ա

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/52» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության և 2-րդ մասի պահանջները, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետը, ինչպես նաև այն, որ «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ հայտում ներառվող շտկված իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացված է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/52» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/52» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ներկայացրած «ԹԱԳՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 01232586, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Լենինգրադյան 31/7) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 12-ին կայացած բացման և գնահատման նիստին ընդունված որոշման համաձայն՝ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

21.06.2024

X

ՈՈՒԲԵՆԻ ԿԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100